ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 15 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի, «Ղազումյան Գուգար» ՍՊԸ-ի, Կարինե Օհանյանի և Ալբերտ Շամիրյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ն, «Ղազումյան Գուգար» ՍՊԸ-ն, Կարինե Օհանյանը և Ալբերտ Շամիրյանը 01.11.2017թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 3, 60, 61, 63, 78, 79 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը:

Կամ

Բացահայտել՝ ՀՀ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական բովանդակությունը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերությունն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի, «Ղազումյան Գուգար» ՍՊԸ-ի, Կարինե Օհանյանի և Ալբերտ Շամիրյանի գումարի բռնագանձման պահանջի մասին գործով կայացրել է վճիռ, որով հաստատել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը: «Յունիբանկ» ԲԲԸ-ն միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ կատարողական թերթ տրամադրելու և կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու պահանջով, որը բավարարվել է մասնակի՝ կատարողական թերթ տալու մասով: «Յունիբանկ» ԲԲԸ-ն կրկին միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ կատարողական թերթն առաջին անգամ հարկադիր կատարման ներկայացնելու ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու և վերականգնելու պահանջի մասին, որը մերժվել է դատարանի որոշմամբ: «Յունիբանկ» ԲԲԸ-ն ներկայացրել է վերաքննիչ բողոք ընդդեմ այդ որոշման, որը բավարարվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ: Դիմումատուները վճռաբեկ բողոք են ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարան, որի ընդունումը վարույթ մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ:

3. Դիմողների՝ վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ փաստարկները հանգում են հետևյալին: Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն չի նախատեսում կատարողական թերթի տրամադրման համար բաց թողնված ժամկետի վերականգնման որևէ չափորոշիչ՝ հարցի լուծումը թողնելով իրավակիրառողի՝ «կամայականության հասնող» հայեցողությանը՝ որոշելու, թե արդյոք ժամկետի բացթողումը «հարգելի է», թե՝ ոչ:

Դիմողների կարծիքով՝ վեճի առարկա դրույթում առկա իրավական անորոշությունն իրավակիրառողին տալիս է սուբյեկտիվ մեկնաբանության անսահման շրջանակ, բացակայում են չափորոշիչներ, սկզբունքներ, որոնք իրավակիրառողին և քաղաքացիներին հնարավորություն կտան կանխատեսելի դարձնել տվյալ նորմի կիրառությունը:

Ըստ դիմողների՝ վիճարկվող դրույթն ստեղծել է անորոշ մի իրավիճակ, երբ կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնման «հարգելի» պատճառներն անկանխատեսելի են պարտապանի համար:

4. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը Սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ 2013 թվականի սեպտեմբերի 24-ի ՍԴՈ-1115 որոշմամբ արձանագրել է, որ՝ «... «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «քաղաքացի-պահանջատիրոջ» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում պետք է մեկնաբանել և կիրառել ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը համահունչ՝ հաշվի առնելով, որ այն վերաբերում է նաև իրավաբանական անձանց, քանի որ այն իր էությամբ կիրառելի է վերջիններիս նկատմամբ...»: Միաժամանակ, հիշյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև սույն գործի շրջանակներում դիմողների կողմից բարձրացված հարցին առ այն, որ՝ «...այն չի նախատեսում կատարողական թերթի տրամադրման համար բաց թողնված ժամկետի վերականգնման որևէ չափորոշիչ՝ հարցի լուծումը թողնելով իրավակիրառողի հայեցողությանը...»՝ արձանագրելով, մասնավորապես, որ՝ «...սահմանադրական դատարանը կարևորում է այն հարցի պարզաբանումը, թե արդյո՞ք դատարանի իրավունքն է ոչ միայն կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետի պատճառները հարգելի ճանաչելու հանգամանքի հաստատումը, այլև բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու պարագայում նաև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը: Այսպես, օրենքը կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավունքը տվել է դատարանին, ինչն իրավաչափ է: Դատարանը, քննելով դիմումը, անդրադառնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը հարգելի ճանաչելու նպատակով պահանջատիրոջ ներկայացրած պատճառների հիմնավորվածությանը: Այսինքն՝ դատական նիստ հրավիրելու մասին օրենքի պահանջի տրամաբանությունը պահանջատիրոջ կողմից դատարան ներկայացված պատճառները հարգելի լինելու

հանգամանքի մասին դատարանի կողմից պատճառաբանված գնահատական տալն է: Հետևաբար, այն պարագայում, երբ դատարանը հարգելի է համարում ներկայացված պատճառները, ապա վերականգնում է կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը»: Վերոշարադրյալ դիրքորոշումների համատեքստում Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ դիմողների կողմից բարձրացված սահմանադրաիրավական հարցի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի նշյալ որոշումը, ինչը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի, անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժելու հիմք է:

Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է նաև, որ դիմողների համար առաջացած անբարենպաստ հետևանքները նրանց նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողներն ընդամենը բարձրացնում են դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել որպես խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկում: Մասնավորապես, գործով ներկայացված՝ ՀՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի մարտի 16-ի որոշման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ վերաքննիչ դատարանը բավարար է համարել կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար ներկայացված հիմքերը, առանձնացրել է որոշակի փաստեր, որոնք հիմնավորում են բաց թողնված ժամկետը հարգելի համարելը, որոնք, ըստ Վերաքննիչ դատարանի գնահատման, պատշաճ ուշադրության չեն արժանացել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ (ՍԴՈ-1115) որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշմամբ՝ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ դիմողներն ընդամենը բարձրացնում են վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա

են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի, «Ղազումյան Գուգար» ՍՊԸ-ի, Կարինե Օհանյանի և Ալբերտ Շամիրյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

15 նոյեմբերի 2017 Ãí ³ Ï ³ ÝÇ
ê ¸ ¸ Î à/2-26